

լուսն իր վրիպակն քաւէ . զուցէ Պալմերստոն ինքնին իր խախտուած նախագահութենէն հրաժարի . այլ հակառակ կուսակցութիւնն Անգլիոյ նուաստացած ազգեցութիւնն առջի բարձրութեանն հասցնելու չափ ձեռնհասութիւն եւ զոհեր ընելու տրամադրութիւն ունի . այս իսկ է, զոր կանխաւ չեմք կրնար գուշակել, եւ զոր անշուշտ, մօտաւոր ապագայի մէջ պիտի տեսնեմք:

— Դանմարգի ճակատագիրն յայտնի եղաւ . այսուհետեւ մինակ մնալու է, անոր և անօգնական Դանմարգի, Անգլիայն ձեռնառութիւնն ստալու անկախութիւնն բոլորովին պարտալի ելալ, որ եւ զոհուելով, մէկ կողմէն, Անգլիոյ տարտամբազարականութեանն, միւս կողմէն, մատնուելու իր ռիսերիմ եւ հզօր թշնամիներուն, որոցմէ կամայ, ակամայ, կանուխ կամ անագան, պարտաւորի պիտի խաղաղութիւն խնդրէ: Արդէն հեռագիրներն կժանուցանեն թէ Քրիստիան Թ. արքայի կրտսեր եղբայր Յոհան Իշխանն Բերլին հասաւ, ուստի Կարլսրադ չուց, ուր կրնակի այժմ Պրուսիոյ արքան: Դանմարգի կառավարութիւնն, կըսեն թէ, արդի և հանգերձեալ ազդեցութիւնն ունի, որոցմէ Գերմանական Կաշնակցութեան մէջ մտնել իր բոլոր երկրորդ և ժողովրդովն պահելով միանգամայն իր տնտեսութեան տակ Եւրոպիայի, Հնդկոյնի եւ Աւստրալիոյ դքսութիւններն: Եթէ այս համբաւս ստուգուի եւ կատարուին դրոշմէ Գերմանիա ծովային կարեւոր դորութիւն կատանայ, Դանմարգը հանգստութիւն կգտնէ և Անգլիա՝ նուաստութիւն: Արդէն տեսակ մի մարտագորար ընդունուել է պատերազմողաց մէջ:

— Նիւ-Եորկէն Յունիսի 25ի լուրերն բերաւ Եւրոպիա Բելգիան չոգեանաւ: Նոյն ամսոյ 21ին Սպարապետ Գրանտն երկու զօրախումբ իր աջ թեւէն ձախ թեւն անցուցերէր Պետերսբուրգ քաղաքն մօտէն պաշարելու եւ անոր հարաւային երկաթուղիին տիրելու համար . այլ Սպարապետ Լին արթնութեամբ կհսկէր: Սաստիկ մէկ նախամարտ տեղի ունեցաւ Երուսաղէմի Պանկ Դամբու մօտ, ուր Հիւսիսայիններն բաւական մարդ կորուսին եւ 4 թնդանօթ: Բոլոր երեքշաբթի գիշերն կռիւն տւեց . այլ չգիտցուի թէ ինչպէս վերջացաւ: Հետեւեալ օրն մարտն նորէն սկսաւ և Հիւսիսայինք ծանր կորուստներ ունեցան: Յունիսի 23ին Գրանտ իր զօրաց բոլոր դասերն յառաջ տարաւ . բայց շուտով իմացաւ որ թշնամին խիստ ամուր գիրքի մէջ էր: Հիւսիսայինք սկսան բախել դէպ ի Հարաւ տանող երկաթուղին, եւ վերջին լուրերն կժանուցանեն թէ Հարաւայինք անոնց դէմ կըսկըն: Վերտին մէկ ընդհանուր ճակատ սկսաւ 24ին . եւ թնդանօթի որոտումներն, նոյն օրն, Սիսի Պոյինտ քաղաքն կառէին: Հարաւայնոյ հեծելազօրն անյաջող մէկ յարձակումն ըրաւ Վիտհաուզի վերայ: Հարաւային թերթերն կժանուցանեն թէ Հնուեր, որ Ռիշմոնդի առման հանդերձանաց մէջ երեւելի խաղ խաղալուէր, Էլինջփորդէն յետո նահանջեցաւ, որու դէմ Լի սպարապետն ստուար գունդեր բախցնելով բաւական գերի բռնեց: Երբման զօրավարն 24ին կժանուցանէ թէ իր դասերն յառաջ կվարէ և թէ Հոֆարդ զօրավարի զօրախումբն մէկ զօրաւոր գիրքի տիրեց, զոր Հարաւայինք յաճախակի յարձակումներ չկրնան ետ տանու:

— Եւր Չեկանդի պատերազմի ճակատներու

մէկուն մէջ Անգլիայի շատ զինուորական աստիճանաւորներ կորուսին մեղած եւ վիրաւոր և յետո մղուեցան:

ՏԻԳՐԱՆԵԱՆ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ

Այս վարդապետ Մայիսի 21 թուով մեզ երկար մէկ նամակ գրեցէ, կէս մի անտեղի պահանջմամբ լեցուն, կէս մի սպանաւոր, կէս մի շողորթութեամբ: Նամակի գլխաւոր կէտերն հետեւեալներն են. 1. Կգրէ թէ վարդապետն տեսնելով ինձ եղած գրկանքն, զիս արդարացուց անուայն ազատութեամբ: « Բիշ մի վար կյաւելու թէ « կրօնական և բարոյական ժողովներու մէջ դատ կխնդրեմ. և ոչ մէկը կայ դէմս. անոր համար կրօնական և բարոյական ժողովներն զիս արդարացնելով, երբ թշնամիներս զայս տեսան հրապարակական հրատարակութեամբ և վատհամբաւութեամբ դիմեցին. քանի մի զօրաշար լրագիրներու ուղածնին հրատարակել տուին: »

Ազգային կրկին ժողովոյ վճռով արդարանալէն զկնի, յիշեալ վարդապետն կյաւելու թէ « ես որ դատաւար կխնդրեմ . . . ես զանկիա Դրան միջոցով կամ Անգլիոյ դեսպանատան միջոցով պիտի խնդրէի ձեռնէ . . . բայց սպառնալ ըլլալով որ դուք ինձ անձնական ատելութիւն մը չունիք . անտարբեր էք, ու միայն ճամարտութեան խնդրով, անոր համար ուզեցի նախ ձեզի գրել և խնդրել ձեռնէ նորա անունն յայտնել և գիրը օրինակել մեզ զրկել . . . »

Վերջապէս նամակն կաւարտէ գրելով թէ « իր Հայելի Վարուց » տետրակէն մէկ օրինակ մեզ կխրէ խնդրելով որ անոր վերայ մեր « տետրութիւնն » ու խորհրդածութիւնը գրեմք: » Ապա Քիւրդիստանի Հայ եղբայր մեր նուիրեալ 500 հեգերէնի մատնահաշիւն տալով իր անունն կստուգրէ:

Մինչդեռ յիշեալ վարդապետն Մայիսի 21 թուով վերալիշեալ նամակն մեզ կգրէր, 2 օր յետոյ, Չամուռճեան Երեւակին մէջ, Մայիսի 23ին, այլ իմն նամակ կհրատարակէր հարցունելով մեզ թէ Էջմիածնէն մեկնած ատենս իմ քովս եղած հարստութեան հաշիւն որու՞ տուերեմք կամ թէ այն տեղի գրատունէն վերցուցած ձեռագիրները որու՞ հրամանաւ առերեմք:

Անոր խրկած « Հայելի Գործոց » անուն տետրակն ձեռունիս չհասաւ, այլ մեր բարեկամի կողմէն եկածն ծայրէ ի ծայր ուղադրութեամբ կարդացինք: Կարդացինք նաև Կիլիկիա, Մասիս, Մեղու, Վարազայի Հախատիս և այլ աղբային թերթերն, որք շատ կամ սակաւ Մկրտիչ վարդապետի եւ իր տետրակի վերայ բանադատութիւն և պարտաւ գրեցին:

Ահաւասիկ և Երկրագունդի դիտողութիւնն յիշեալ անձին և իր գործոց վերայ: Երկրագունդն, ինչպէս իր խորագիրն և իր խմբագրի կոչումն կժանուցանեն, Եկեղեցւոյ Սրբութեանց և անոր յանիրաւի գրաւարտուած և չարախօսուած պաշտօնէից պաշտպանութեան համար սկսուած է: Մարդիկ ինչ և իցէ կոչումն կամ վիճակ ունենան,

տակաւն մարդ են. Եթէ կոչումն մարդկային անհատներէն ամանք կարճատես, ասովի ուշքին պատկանելի և նուիրական կընէ . սակայն մեր այս ախտս ի սկզբանէ հետէ չեմք ունեցեր և ոչ ալ երբէք պիտի ունենամք: Մեր դատողութեան առջև աշխարհական, եկեղեցական, զինուոր, դատաւոր, պարտիզական և կրօնաւոր, ամենն ալ հաւասար մարդ են և իրարմէ մազիւ չափ տարբերութիւն չունին, եթէ բարոյական սկզբունքն, կոչման համեմատ վարքն և ներքին մարդն իրարմէ չգատեն զանոնք: Գիտեմք որ շատ անգամ սլաւատներէն և վեհարաններէն հալածուած առաքինի թիւնն անշուք խորհիմներու մէջ ապաստանարան յինտներէ. հաւաստի եմք որ պարկեշտ շինականներ մէկ անգամէն աւելի սեղանի Գերապաճաւ պաշտօնէից սրտի սրբութեան և հոգւոյ ուղղութեան փրկարար դասեր տուերեն, որոց, թէ և արժանի էր և սլարտք աշխարհի լոյս ըլլալ և մարդկային անհամութեան աղ համեմիչ: Մարդիկ իրենց հոգեւոր, մտաւոր և բարոյական բարեմասնութիւններէն զատ ուրիշ պարձանայ կամ գովութեան խարխիւ չունին . և տեսութեան այս կետէս է, որ Երկրագունդն Տիգրանեան վարդապետի և իր ընթացքին վերայ քանի մի դիտողութիւն և բանադատութիւն կընէ: Ես անց ինչ և իցէ կրկն և աշատութեան, որոցմէ, կյուսամ թէ նա կրնայ հոգեւոր զարգացման օգուտ քաղել և եթէ ոչ այժմ, գէթ, խտովեալ կիրքն դադարէն և իր խիղճն անաշատութեամբ քննելէն յետոյ մեզմէ շնորհակալ ըլլալ:

Նախ « Հայելի Վարուց » ըտուած տետրակն, իբրև Մեսրոբեան լեզուի արտադրութիւն, իբրև հայերէն գրչութիւն, ամենաողորմելի է և ամենախորին կարեկցութեան արժանի աշխատութիւն է: Թէ և անոր տառերն և բառերն հայերէն են. այլ շարողութիւնն՝ խեղճ և խիստ իմաստակ համակի գրչէ թափած, ուր բերականութեան, հայկաբանութեան և յարմարագրութեան տարրական կանոններու հետքն անգամ չեն տեսնուիր: Անոր տպագրութիւնն ալ, իբրև արհեստ, ամօթ կրեցէ մեր դարու յառաջադիմութեան:

Տիգրանեան վարդապետն անոր 20, 26, 49 և այլ երեսներու մէջ 501, 1514 և մինչև 2206 ժամերով իր ըրած ճանապարհորդութիւններն և պոռոյներն կարտմէ իբրև վարդապետական առաքինութիւն: Եթէ այսպիսի ուղեորութիւններ Աւետարանի տարածման, քրիստոնէութեան ծաւալման, հոյակապ Եկեղեցւոյ հաստատութեան համար ըրած ըլլային՝ անշուշտ գովութեան արժանի էին, մա, նաւանդ մեր ժամանակի մէջ, ուր Սուրբ Երանկան Եռանդն մարած, եւ մեր կարգաւորներն, ըստ մեծի մասին մի, մի վանք նստած, ժողովուրդն անխնամ երեսի վերայ ձգերեն. եթէ տարին մէկ երկու անգամ իրենց անապատէն դուրս կեղլեն. անոր շարժառիթ պատճառն ալ յայտնի է, և ամօթ ալի հոս յիշել: Այսու ամենայնիւ, Տիգրանեան վարդապետն, որ Քիւրդիստանի Բարեկարգիչ և Սուշնորդ էր, Ինչ բան ունէր Բաղդադ, Ինչ գործ ունէր Թիֆլիզ.— յայտ է թէ — ոչ ինչ, որեմն նա այսչափ երկար ճանապարհորդութիւններ ընելով՝ ոչ այլ ինչ կապացուցանէ, եթէ ոչ, թէ բնութիւնն զանկիա քաջար կամ սուրճանդակ ըլլալու ստեղծերէ և ոչ թէ հովիւ, որ սակաւ մի նստկան բնաւորութիւն և իր վիճակին մէջ գտնէ երբեք, չորս տարի շարունակ կենալու ունակութիւն ունենալու է: Հետեւարար շատաշրջութիւնն,

ոչ ընտր. եթէ բոլոր երկրէ բնական եւ բարոյական առաքինութիւններն վերցուին, մեր հաւաստի եմք, որ մեն ժողովրդեան մէջ տակաւին բնական անմեղութեան եւ ուղղութեան հետքն պիտի մնան, որով ոչ թէ իր վաստակաւոր եկեղեցականին, այլ նա եւ անծանօթ օտարին կարեւորութիւն, գութ եւ մարդասիրութիւն պիտի ցնէ: Ուստի մէկ Հայ եկեղեցական, որ այս աստիճան իր ազգի արդարութիւնն եւ օրէնքն ունակութիւն կընէ եւ այլակրօններու ատեան կը իմէ իր ժողովրդեան դէմ դատ վարելու՝ նա ինչ աստիճան եւ յատկութիւն ունենայ, նախատինք է ազգութեան, թեքանք է հայութեան եւ անհայր անմայր ընտանիքի ճշմարտութեան: Պարտաւորութեան ատեաններն այսուհետեւ գանձիկա արդարացնեն. ըստ մեզ, այն անձն, որ ազգի արդարութեան զգացումն ունակութիւն ընկերվ օտար եւ այլակրօն ազգերու կը իմէ իրաւունք ինտուել, նա մատնիչ է, այսօր ալ, վաղն ալ եւ յաւիտեան: Ահա անոր եօթներորդ յանցանքն:

Մեզմէ մեր թղթակիցներու անունն եւ անոնց գրած նամակաց պատճէն պահանջելն եւ չտուած ատենս Բ. Դ. Եւ Անգլիոյ Դեսպանի անուամբ մեզ պատմաւոր մեզ երեւակայել տուն թէ Տիգրանեան Բրիտանիա Բալու կամ Սղեթտ կարծերէ: Որուն կապտասխանեմք թէ Անգլիոյ մէջ Երկրագունդն Տէրութեան հրամանաւ բացուած ըլլալով՝ այն ամեն արատութեան եւ պաշտպանութեան իրաւունքն կ'ապրէ, որ ինչ Տայսն, Մօսկոն փօստ եւ այլ ամեն լրագիրք. հետեւաբար ոչ որ իրաւունք չունի, ոչ Դուռ, ոչ Երզնիք եւ ոչ Անգլիոյ Դեսպան մեզմէ նամակի պատճէն կամ թղթակցի անուն պահանջել, եւ ոչ ուրեմն Տիգրանեան վարդապետն:

Իսկ անոր Երեւակի մէջ ըրած հարցմանցն կապտասխանեմք թէ մեր ունեցած հարստութիւնն եթէ մեր անձին սեպհական է՝ մեր անոր մասին ոչ որի համար տալու պարտականութիւն չունիմք. իսկ եթէ այլոց է, եւ անոնց անուններն Տիգրանեան վարդապետն գիտէ՝ կ'արեւելեմք զինքն որ յականջ յանուանէ մեզ իմացունէ հրապարակաւ որպէսզի այնպէս ալ հաշիւ տամք. նոյն կապտասխանեմք նաև Սուրբ Եջմիածնի գրատունէն տուած ձեռագրոցս համար: Մեր մատենապետ եղած չեմք ընտր, որ ուզած գիրքս առնեմք. մեր ստորագրութեամբ ձեռագիրք ստացերեմք եւ արտագրելն զինի դարձուցեր եւ մեր ստորագրութիւնն յետոյ առեր. մեր ունեցած ամեն ձեռագիրքերն մեր գրչի արդիւնքն են. ուստի հրապարակաւ կ'պահանջեմք որ մեր ունեցած հարստութեան եւ մեր տուած ձեռագրոց որքանութիւնն, տեսակն եւ անունն հրապարակաւ մեզ ծանուցանէ. եթէ չուզեր քանդուղն խաբէրայի եւ անաւօր ստախօսի արուեստագրոջն իր ճակտին վերայ դնեմք: Այն ատեն կ'ստատանամք մեր Երեսն Հանգուցեալ Կաթողիկոսի ստորագրութեամբն մեր վարչութեան կարգաւոր յանձնումն մեր յաջորդին իրեն եւ աշխարհի իմացունել, եւ եւ Եջմիածնի գրատունն մեր քանի մի ձեռագիր ընծայելն: Ըստ որում անոր վերայ եղած կրօնական եւ բաղարական սոփոստանութիւններն կրնան, առ այժմ ասկէ աւելի գրեւորման չըստեցանք. յետոյ վերստին այս խնդիրս ձեռք կ'առնեմք:

Տունիսի Տեղապահութիւն.

[Տես թիւ 16]

Ահա Հռոմայեցւոյ դարէն ի վեր, այս աշխարհիս պատմութիւնն, որ Զեօդիտանին եւ Բելլաքենին կ'համապատասխանէ, եւ զոր, երկար ատեն, Լատիններն սեպհական Ափրիկէ կոչեցին:

Հռոմայեցիք, Կարթագինէ աւերէն յետոյ, մինչեւ հինգերորդ դարու կէսն տիրեցին երկրին: Այն ատեն Վանդալներն հոն բնակեցան, եւ Բելլիսարէն վաճառեցան: Յետոյ Ավարներն եկան եւ Կայրուանի պետութիւնն հաստատեցին, որուն տիրեցին կարգաւ Աղլարեաններն, Գաութիներն, Զէյթաններն եւ Սլաւոններն: Այնուհետեւ եկաւ այն բազմավորով դարն, ուր ամեն սրտաւոր իրողութիւններ արագ արագ տեղի ունեցան: Բարբերուս, 1534ին յաղթութեամբ մայրաքաղաքն մտաւ: Միւլէյ-Հասան, աթոռէն ինչպով Բարդ-Բէնտի ձեռնտուութիւնն խնդրեց, որ ահագին մէկ նաւատորմ պատրաստելով, հոն գնաց եւ 1537ին Փօրտո-Ֆարինա ցամաքն ելաւ, եւ գրեթէ իսկոյն Գուլետ ամրոցն պաշարեց, ուր Բարբերուս արաստան եղեր էր: Այս բերդին տիրելով, նա Միւլէյ-Հասան իր աթոռին վերայ հաստատեց, զոր եւ ոչ անազան, Համիդա, իր հարազատ որդին, աթոռէն վարձեց. քանի մի տարի յետոյ Թուրքերն Տունիս քաղաքն տիրեցին եւ տեղապահութիւնն իրենց լայնածաւալ տէրութեան հետ միացուցին:

Ահմեդ բէյ եւ Սիդի-Մուհամմէդ, երկու իշխաններու շնորհիւ, Տունիսի երկիրն շատ կրթուցաւ: Ահմեդ բէյն, որ 18 տարի իշխելէն յետոյ, 1855 թուին մեռաւ, Եւրոպա եւ Ամերիկէ համագումարն բարի յիշատակներ ձգեց. կըսեն թէ նա հազարաւոր նորամտութեան եւ արդարաւորով գործոց բազմութիւն օրինակներ թողոյց, որք մեծ պատիւ կընեն անոր աստիճանին: Հազարէն մէկն միայն յիշեմք: Մէկ պողովմանաւ չքաւոր կին եկաւ, մէկ օր անոր դանգաւել թէ միշտ իր թուղերն ծառի վրայէն կ'զոյնան, եւ թէ չկրնար գողութիւնն արդիւնել: Բէյն անոր պատուիրեց մնացեալ թուղերու մէջ մի մի ցորնի հատ թաղել եւ հանգիստ կենալ: Բարի կնիկն իր իշխանի պատուէն կատարեց, որ սակաւ օրերէ յետոյ, գնել տուեց իրեն համար բոլոր թուղերն, որ Տունիսի շուկան կային: Մէկ պողովմանաւ բով թուղեր դրան, որոց մէջ ցորնի հատեր կային: Գողն բռնուեցաւ եւ խիստ մեծ տուգանք դանդաղատուորին հատուցանել զստորարտեցաւ, որ երկար ատեն իր իշխանի արթուն իրաւարարութիւնն օրհնեց:

Սիդի-Մուհոյ, Տունիսի այժմեան բէյն, ոչ պահաւ նշանաւոր է իր իմաստութեան եւ ծայրագոյն ուշիմութեան կողմէն: Նա կըրպի չափազանցութիւններն կարճել եւ իր ժողովուրդն յատաշար իմութեան մէջ մտցունել:

Նա մէկ սահմանադրութիւն տուեց իր երկրին, որ մեծ պատիւ կընէ իր ազատասէր եւ վեհ մտքին, որ զայն յղացեր է: Անոր հիմունքն ցնկելով անոր գովութիւնն ըրած կըլլամք: Նոր սահմանադրութեան մէջ, որ 1860ին հրատարակուեցաւ, հաստատուեցաւ, օրինակի համար, թէ անոր պմեն հապտակներու եւ ամեն բնակիչներու, ինչ եւ ինչ ըլլայ անոնց կրօնքն եւ անգլութիւնն, կատու-

րեալ ապահովութիւն երաշխաւորեալ է եւ թէ այն ապահովութիւնն անոնց անձերու, ընչից եւ համարման համար է: Մահմետական եւ այլ բնակիչներն հաւատար ըլլալու են օրինաց առջև: «Իրաւունքն երկրի վերայ կ'ուէ, որ ապահովե պիտի իրաւունքն անիրաւութեան դէմ եւ տկարն՝ զօրաւորին դէմ:» Իսրայելացի հպատակներն այլ եւ ստիպուելու չեն իրենց կրօնն փոխել: Անոնց սինագոգներն յարգութիւն պիտի եւ ամեն տեսակ նախատինքէ տղատ «վսան դի պաշտպանութեան վիճակն անոնց ապահովելու է մեր առաւելութիւններն, ինչպէս որ անոնց տալիք տուրքն:» Զինուորներն հաւքութիւն պիտի զինուորագրութեան ձեւին համեմատ: Մէկ առեւտրական դատարան պիտի հաստատուի: Առեւտրն ազատ է ամենու համար: Օտարներն, որք կուզեն բնակիլ Տունիսի երկիրն, կ'արող են ամեն արուեստ եւ ձեռակերտութիւն ընել: Կարող են անոնք ամեն տեսակ կալուած գնել երկրացւոց հաւանար իրաւունք ունենալով, եւ այլն:

Տունիսի տեղապահութիւնն կերկնայ դէպ ի Սիլիվայի դիմացն Կարէսի ծոցին եւ Ալլերիայի մէջ: Բարի եւ ձերմակ հրաւանդաններն աւելի հիւսիսային կէտերն են: Այս երկու առաւարներու մէջ տեղն է Տունիսի նաւակայանն, որ իր հարաւային մասին մէջ մէկ սրանչելի կիսաշրջան կ'աւանդուէ: Գուլետի նեղ լիւն կ'միացունէ զայն Էւֆրատիս լճակին հետ, որոյ ներքի կողմն չինուած է Տունիս քաղաքն: Այս ընդարձակ լճակիս շրջապատն է, ըստ կշռապատմութեան Պ. Գեյնի 18,000 մետր: «Թէն հին ատեններն Հռոմայեցւոյ նաւատորմի ապաստանարան եղեր էր, երրորդ Գունեան պատերազմին ատեն, հետեւաբար, աւելի եւս իրաւամբ, խաղաղութեան ատեն Փիւնիկեցւոց տորմիլին, բնաւ մեծ խորութիւն չէ ունեցեր. ըստ որում չափելով իմացան որ անոր խորութիւնն մէկ մետրէն եւ 70 սանտիմետրէն աւելի չէ եղեր երբեք: Պ. Բեյլի իրաւամբ կ'հետեւցունէ որ հոն չընդո նաւերն մէկ մետր եւ 30 սանտիմետրէն աւելի չընդ պէտք ունէին համարելով որ հիներու պատերազմական նաւերն կարծածէն աւելի փոքր էին:

Տեղապահութեան հոն ընդհանրապէս կրուտ է, մօրուտ եւ աւաղախան մօրուտ. ծովըրն բերրի է, երկրամէջն, տեղ տեղ հովիտներ կան, տեղ տեղ՝ անապատներ: Դատ տեղ սեպտեմբր եւ ժայռոտ կոնտեր կան, որք դարան ալի են, ուրիշ տեղեր ալ, եւ յատկապէս Համան-Լիֆի եւ Զերել-Ուլասի լեռներու մէջ կան երկաթի, կապարի, պղնձի եւ ծծմբի ճոխ հանք:

Անանոց եւ բուսոց կողմէն երեւելի տեսակներ ունի: Ինձ, վագր, յովալ, ճագար, լուսանն պատառող գազաններ կ'ուսնուին, ինչպէս նաեւ ուղտ, եղջերու, ջայլամ, ֆլաման, կուռնգն եւ Եւրոպայի այլ ամեն ընտանի կենդանիներն:

Արեւելցիք, որք դիւրաւ հակամտ են նկարէն ոճերու, Տունիս քաղաքն կըսեն երբեմն Էւֆրատ (փառաւոր), երբեմն Էւ-Զահրա (կանաչ), երբեմն Թունէս-Էւ-Դաւրա (լաւ պահուած), տեղի ձեռակերտութեան, օթարան երկրանկութեան, ծաղիկաւ, սպիտակ եւ այլն: Ինչ եւ ըլլան այս ամեն մականուանքս, Տեղապահութեան մայրաքաղաքն Մօրայ ամենազեղ քաղաքներէն մէկն է եւ շատ հաճելի երեւոյթ կըն-

ծայէ ճանապարհորդաց : Նախնի յիշատակներն , որք անոր շուրջն եղած ամեն տառապանքուն յարակից են , երեսակայութիւնն դրաւելո՞ւ ձեռքն տուէր իրան : Եւրոպային , ծոցն մտնելով , որ բողբէն բանի մի հազարամեայ հեռի է , նախ իր հայեցումսն Կարթագեն քաղաքի դիրքի վերայ կարծողնէ ազաւորէն , ապա յորեպաշտական հետաքրքրութեամբ Սուրբ Լույսի մատուցելուն , հոյակապ բանքան կղիտէ , որոյ կամարներն հեռաւ նալով աներեւոյթ կըլլան , և երբ հին դարոյ այս ամեն նշխարքս աստուծոյն փառս յարուցիկ իրեն , ապա Տունիս քաղաքի եւ անոր շրջականքուն տեսնելու կարի հրապարիչ կերպիւ Արեւելքն անոր կցցնէ :

Տունիսի դիրքն , դրեթէ ամենայն մասամբ աղէկ է : Մերձակայ բլուրներն անոր այնչափ ամբողջիւն կընծայեն , որչափ իր աստամաւոր պարիսպն , որոյ դռներն ամեն երեկոյ կրակաւին , որպէս թէ բերդաքաղաք ըլլար : Այսու ամենայնիւ անոր դիրքն , որ Միջերկրականի սրահին մէջ եւ Ափրիկէյի հիւսիսային ծայրն է , շատ պիտանի է և երեւելի ապագայ ունի : Տունիս , մօտէն կըտեսնէ ընչ մի իր պատանքն : Անոր երեք թաղերն , Մօրայ թաղն , Եւրոպայոյ թաղն , մանաւանդ Հրէից թաղն մարտութեան կարօտ են . անոր փոքրիկներն , շատ տեղ , նեղ , ուր և առողջութեան վնասակար են . սակայն ով որ հեռիէն կղիտէ քաղաքն , անոր դոյզն անկատարութիւններուն անգէտ կմտայ , որ Ափրիկէյի միահամաւ բազմներուն սեպհական է , և կտեսնէ որ չբեղ զծերով , բլուրներու վերայ ամեն տուներու վրայէն , անհամար միևարդէն և զմրէթներ , որք զհեղեղիկ տպաւորութիւն կընեն : Կաղրան , որ բոլոր քաղաքէն գրեթէ բարձր է , երեւելի չէր մի է . անոր բուրգերէն մէկն բանդակներով և շատ հետաքրքրական նկարներով լեցուն է : Մարան , որ այժմեան իշխանի զմայլեցուցիչ դարպասն է եւ անոր քաղաքի մէջ ունեցած պալատն Գար-Էլ-Բէյ Եւրոպայի ամենագոր արքայից պալատներէն վար չեն մնար չբեղութեան մասին : Բարդօ , որ Տունիսէն ընչ մի հեռի չիտուած է , համանգամայն իշխանական պալատ է , ամրոյ և զատ քաղաքիկ զօրաց համար յատկացեալ : Այլ շինութիւններն , որք շրջականքն ցան և ցրիւ կան , նոյնպէս առանձին յիշատակութեան արժանի են , որոցմէ Մանուրան և Մոհամեդիէ , որ մեռած բէյի պալատն է եւ այժմ երեսի վերայ ձգուած : Այն տեղ դառնեցան շատ երեւելի հուսթիւններ ևս և Կարթագենի եպիսկոպոսներու դամբարաններն :

Պիտի շարունակութիւն

Պարոն Սրիսար Միլի ետակն Անգլիոյ քաղաքս կանուրեան վերայ :

Այս ամսուն Իր Գէյի Նիս լրագրին մէջ Գ. Ճօ Սիլիարթ Միլ , մեծանուն փիլիսոփայի , Եւրոպայ և Անգլիոյ արդի յարաբերութեանց վրայ գրած մէկ նամակը տեսնելով , որով հասարակաց ուշադրութիւնը կհրաւիրէ Եւրոպայ քաղաքականութեան մէջ տեսնուած նոր երեւոյթի մը վերայ , պատշաճ դատեցիք , նոյն լման թարգմանել , փանաւանդ որ նամակիս զգացմանը

արձագանքները անցեալ շաբթուան Փարլամենտի վէճին մէջ ալ լսուեցան , և կարելի է թէ ապաւնիլի մէջ յառաջ դադիք զէպրերուն մէկ մասին բացատրութեանն ալ կօգնեն : Գ. Միլ . իւր առանձնութեանը մէջ գրիչը ազատութեան եւ մարդկութեան մշտնջենաւոր խնդիրներուն նուիրած է և անցաւոր զէպրերուն վրայ իւր կարծիքը երբեմն երբեմն կ'այտնէ : Բայց երբ յայտնէ բարեկամաց և հակառակորդաց ուշադրութիւնը և ակնածութիւնը հաւատարմագէտ կըրաւ :

Գէյի Նիս լրագրոյ խմբագրի .

«Յարգոյ Տէր»

Ներքէ ինձ որ հրաւիրեմ ձեր մտադրութիւնը արդի կառավարութեան և Թօրիներուն մէջ յառաջիկայ շաբթուա որոշուելիք լեռնորոյն մէկ կէտին , որ , երեւ թէ , իրեն արժանի եղած ուշադրութիւնը ընդունած չէ :

«Անգլիոյ կառավարութիւնը , ընչ ժամանակ յառաջ , Լէհաստանի և հիմայ ալ Գանձարգի լեռնորոյն մէջ մտաւ համախարհական մեծ անարդարութեան մը գործադրութիւնը արգիւնելու համար , թէպէտ և այսնպաշտական պատերազմի երթալու կամ չունէր . ուստի խիստ պատասխանատուութեան մը կիողեն զինքը ըսելով թէ իւր ընթացքը երկրին պատիւը իջեցուց ուրիշ ազգաց առջև և թէ իրաւունք չունէր աստիկի ոճով խօսելու երբ իւր խօսքը զէնքով պաշտպանելու անպատրաստ էր :

«Արդ բանի որ քաղաքակրթութիւնը յառաջանայ՝ ամէն բարձր ակրունքի տէր ազգերը յաճախ և յաճախ պիտի վարուին այնպէս , ինչպէս որ կ'անգտուի թէ Անգլիա վարուեցաւ վերոյիշեալ խնդիրներուն մէջ , և թէ որ իւր այս ընթացքը ընդհանր ըլլալով , բոլոր ազգերը ի գործ դնեն զայն , ինձ կ'իմանայ որ ազգաց իրարու հետ ունեցած յարաբերութեանց յառաջադիմութեան մէջ ըրած բայլախօսներուն կարեւորագոյններէն մէկը պիտի ըլլայ : Անգլիոյ ժամանակները առգերը հազիւ պատերազմի գնացած են , բայց եթէ իրենց կարծեալ շահը կամ պատիւը պաշտպանելու համար : Կերեւի որ ընդհանուրին կարծիքն է թէ այս շաղկէ խօստորեւ չէ , և յառ ժամանակներ չեմ որ այս կարծիքին բոլորը կամ թէ որչափը ուղիղ է : Բայց խնդրոյն մէկ կէտն կայ , որուն վրայ նախնեաց կերպը փոփոխել խիստ պատշաճաւոր է թէ որ ալ փոփոխութիւնը ասկէ անդին անդամ չմտուի : Անցեալին մէջ կառավարութիւնները երբ անարդարութիւն մը իրենց չէր մըտներ՝ հոգ չէին տաներ ուրիշին շահին , և անիրաւութիւն մը ինքնին իրեն անիրաւութիւն զիրենք չէր սրտմտեցներ , ոչ ալ անոր իւր պատշաճ անունը տալով՝ զօրաւոր դրացիներու բարկութիւնը իրենց կծղէին :

«Արդ Անգլիոյ կառավարութիւնը թէպէտ և ոչ առաջինը , այլ առաջիններէն մէկը եղաւ , որ այս անձնականգիր և վնաս համբերութիւնը դադարեցուց : Իբրեւ Մեծն Բրիտանիոյ կառավարութիւն և Անգլիոյ ազգին թարգման՝ Լէհաստանի եւ Գանձարգի երկու խնդիրներուն մէջ հրապարակաւ դատաւարաց յանցանք մը , որչափ որ ալ , անոր հետեանք իրեն չէին մըտներ . և զիտէր ալ որ պիտեալ միջամտութեամբ զանի արգիւնէն յառաջ դադիք բոլոր վնասներուն և դժուարութեանց դէմ դնելու անկարող էր : Կան մարդիկ ,

որ այս կերպ վարքն կըտամբանայ յարմար թիւն կըտանեն . ինձ կ'իմանայ որ , քաղաքականութեան և ազգերու մէջ ծագած անիրաւութիւնները , անշահաւոր տհաճութիւն յայտնելով , բարոյական ուստիկանութեան մը ներքեւ բերելու սովորութեան տուալին փորձն է այս , և թէ որ անշահաւոր հանդիսաւ տեսնելու ձեռք աւելի սաստիկ միջամտութեամբ մը այս տեսակ անարդարութիւններ զաղելու ժամանակը դայ՝ արդի մեզմ միջոցը անոր պիտանի կարողեւոր և պատրաստիչը պիտի ըլլայ :

«Բայց կառավարութեան համար նոր բան մըն է զգացածը յայտնել առանց զանի հարուածով զօրացնելու . որովհետեւ կառավարութիւնները արդարութեան և պարկեշտութեան վերացեալ զաղախարներուն տակաւին բաւական հոգատար եղած չեն կամ անանց ոտնակոխ ըլլալուն դէմ բաւական զայրացած չեն որ վերոյիշեալ սովորութեանը հաւանին : Կառավարութեանց մեծագոյն վաստ դեռ այս բարոյական անզգայութեան և անտարբերութեան վիճակին մէջն են . և մինչև անգամ՝ անկարող են հասկնալու թէ կառավարութիւն մը կրնայ իրեն չփաստող անիրաւութեան մը վրայ հոգ տանիլ : Հետեւաբար կառավարութիւն մը , որ պարսպաններուն նայելով , դիւցադնաբար վարուելով , իրեն չներած ժամանակը պարկեշտութեամբ խօսիլն ի գործ կ'դնէ՝ սպասելու է առջի բերանը՝ ասկա ինչ կ'որոշենէլ այն , որուն «պատիւ» անունը կ'որուի : Կառավարութեան մը պատիւը , նման անցեալ ժամանակներու մասնաւոր անձանց պատիւին , տակաւին կ'չափուի իւր վիրաւորեալ զգացմանցը վրէժը առնելու համար սուրբ քաղաքացւոյն՝ ցասկոտութեան աստիճանէն . ուստի երբ կառավարութիւն մը կըզոյրանայ առանց սուրբ պատեանքէն հանելու , ժամանակ մը կ'կարծուի որ , կամ իւր անկեղծութիւնը սակաւ է կամ բաշխարստութիւնը : Բայց Անգլիա՝ կարող է եւ բաղձալու է՝ ցցունել որ այս տեսակ պատիւի պէտք չունի : Երկրին զգացումը՝ կառավարութեան չներեց Լէհաստանի համար պատերազմի երթալ . եւ հաւանական է որ Գանձարգի համար ալ սուրբ քաղաք չէր ներեր . բայց այս ենթադրեալ համարելով կ'յուսամ որ սակաւակիւ Անգլիացի կայ , որ իւր երկրին չպատերազմի որոշած ժամանակը , կցանկայ անոր լուս կենալու . եւ կ'յուսամ որ թէ որ Լէհաստան տեւրալ ըլլար եւ Գանձարգ կողմաւորէր , ստանայ մեղմ բողբ մը ըսելու , պիտի զգացուէր աւելի ամ գոհութիւն մը կառավարութեանն և աւելի խորին տոթիւ և ազգային կորանք բանթէ ինչ որ կ'կարծեմ չիմայ կ'զգայուի :

«Արդ վիճակնուս մէջ ակնածութեան տեսողական կորուստ մը ունեցած չենք անոնցմէ անգամ , որք ոյժ գործածելու կարողութիւն և կամք ցցունողներէ միայն կանխած են : Ազգայնակի պիտի տեսնեն թէ մեր վրայ նկատած այս փոփոխութիւնն պատերազմէ աւելի երկնչիլ սկսեալուս յառաջ եկած է կամ թէ համախարհի մեծ անարդարութիւնները յայտնելու եւ ստգտանելու սկսեալուս միայն հետեւութիւնն է , թէեւ այս անարդարութիւններու գործադրութիւնը արգիւնելու համար պէտք եղած գոհերը ըլլան աւելի մեծ քանթէ միայն մէկ տէրութեան մը պարտքն է ընել իրեն սեպհական չեղած կոխի մը մէջ :

Մնամ եւ այն

Ճ. Ս. Մ.

ՉԱՐ ՍԱՆՃԱԽ

Անցեալ չարաթ մէկ աղերսագրի պատճէն մեզ խաւրեցին, զոր յոյժ գովելի Բարձր Արքանապատիւ Ներսիսեան վարդապետ Առաջնորդի եւ երկուստան Անդամոյ ստորագրութեամբ Պօլսոյ ազգային Պատրիարքարանին մատուցուեր էր Չար Սանճախի ժողովրդեան անտանելի տառապանացն դարման տանելու համար: Յիշեալ պատճէնն արեան արտասուքով կարգացինք եւ գարովեցինք չարաչար այն Ամիրայ, Բէյ եւ այլ տիտղոսաւոր հրէշներու ազգակործան ընթացքն, որք ժողովրդեան այս աստիճան տառապանքն անգամ տեսնելով՝ տակաւին ապաւուտ սրտերնին ամենախորք կարեկցութիւն կամ գութ չղար եւ դեռ խժղե- ժական անգթութեամբ երկինք եւ երկիր կաղնու- րեն որ Քաղաքական Ժողովոյ անդամոյ թիւն կա- տարեալ չըլլայ, անոնց նիստերն՝ կանոնաւոր չըլլան եւ գործերն ալ կարգաւ չընթանան. այլ որակցելի ամենայն ինչ խառն ի խառն, տակնուվրայ ըլլայ եւ մեր ժողովուրդն յուսահատելով՝ Գեր. Հասունի քղանքցին տակ վաղէ անդորր փնտռել: Փայք Վասակին, պատիւ Մեհրուժանին, որք, եթէ յարութիւն առնէին այսօր՝ քանի, քանի տարի արդեօք աշակերտէին պիտի իրենց թոռներուն չգիտցածնին եւ չըրածնին ուսանելու համար:

Չար Սանճախի Հայ հասարակութիւնն իր կայսերական բարեխնամ կառավարութենէն գոհ է իր արքայի կեանքն կորսնէ. անոր շնորհած ազա- տութիւններն վայելել կրտսեպի: Ժողովուրդն կտրտնջայ միայն, կողոքէ քանի մի աւազակ եւ սրիկայ Քիւրդերու դէմ, որք յաւերժական յի- շատակաց արժանի Սուլթան Մահմուդի արգարացի սուրէն վախած՝ աս դիս անդին պահուտեմ անոր ժողովուրդն կկեղծեն. իսկ քանի մի ամիրաներ, փոխանակ Բ. Գ. անոնց արտոր կամ զսպումն ինդրելու, տակաւին ծանրագոգութ զլուս գլխու տուած կիտրէին թէ կարելիէ արդեօք նոր տառա- պանք եւ կեղեքանք հնարել մեր ժողովրդեան որպէսզի Յեղուխութիւնն յաղթախան հան- գիտանայ Լուսաւորչի վերայ անոր որդիքն Լեւոնի եւ Նեստորի ընծայելով: Կարգացերէի թէ Յեղ- ուխտութիւնն իր արբանեակներն անշունչ մերե- նայ կընէ. այլ ոչ այսչափ սալ ապաւուտի:

Փերիոյ երկուստան ժողովական անդամոյ ստորա- գրութեամբ, հասանորթեամբ հաւացն վիճակաց:

Գէտ Չար Սանճախու վիճակի, Յովհաննէս Վարդապետ Ներսիսեան, Մարգար Խալապեան, ատենապետ, Գէորգ Ուրֆալը, ատենադպիր, Հաճի Գրիգոր Քէչեայ, նախադաշ, Աւետիս Երնայեան, Օհան Պուզգիեան, Մարկոս Քիլի- րեան, Հաճի Գրիգոր Մուլթալ, Յակոբ Խէլ- րոյ հաճի Պաղտատարեան, Հաճի Սարգիս Ենով- րեան, Մարտիրոս Հաճի Անթառամեան:

Նկարագիր աղետից գծաւոր վիճակին Չար Սանճախու:

Ի 1864. Մայիս 20 օրինակեալ.

Ենթարկեմ զանձն իմ գլխովին ընդ ոտիւր վճելու:

Ամենապատիւ եւ Ողորմած Սրբազան Հայր եւ Ազգասէր Ողորմածափրատ Բարեբար Տեարք՝ խոնարհ յայտարարութիւնս

Ո՛վ Աղլասէր Տեարք՝ մինչեւ ե՞րբ ոչ ոլլամիր:

Հեռագրական նամակ Սրբազնութեանդ ի Խար- րերդ ընդունելով, բայց տեղւոյն կուսակալը ի

Մալաթիայ գողով, սիրելի Ազգիս սիրոյն պարտա- տրեցար միանգամայն երկարորէն գնալ մինչեւ ի Մալաթիա: Արդարեւ Կուսակալը պատուով ընդունեց եւ մանաւանդ իւր պատուաւոր սպասա- տրայ մէկը ընդ մեզ ընկերակից ընելով վերադար- ձար կրկին ի Չար Սանճախ Ղարապի անուամբ գիւղն, ուր Միւսիւր Համօզ պէկն նստի, վաղ- վաղակի յատուկ յայտարարութեամբ ծանոց տեղւոյն բարբարոս Տէրէպէկերուն որ գումար- վին ի Ղարապի: Ոմանք բացասեցին եւ ոմանք ներկայ գտուան, եւ մեր չհամբերեալ նոյն ժող- վին՝ սկզբանէ անտի ըրած չարութիւննին յականէ յանուանէ մի առ մի ծանուցար ի զգաստութիւն: Յուսկ յետոյ հասաւ յոյս իւրեանց, այնուհետեւ պարտաւորեցան դաշնադրութեամբ մուրհակ մի տալ որ այսուհետեւ Հայոց Ազգին երբէք չը- խառնվին եւ իւրեանց գործոց չմտնենան երբէք: Նոյնպէս դաշնադրութեան գիր մը ծառայող տուաւ սակերպով որ մինչեւ հիմայ, ինչ որ եղաւ, ներեցար, բայց այսուհետեւ իրարու հետ սիրով վարուին: Աւագ չարաթ օրը նոյն ժողովքէն ցրուեցանք, եկանք ի Բերի գիւղաքաղաքն ի բնակարան մեր. յայնժամ պատառեաց Պիղատոս զհանգրձ իւր. . . եղև յետինն չար բան զառաջին, կատաղե- ցան, բորբոքեցան, նեխեալ չարութեան թոյնե- րին թափեցին մեր եւ ժողովրդոց վերայ: Յայն- ժամ լի եղև սրտմտութեամբ եւ բարկութեամբ. . . հանգրձ իւրեանց սպասաւորօք. յետ դաշնադրութեան հասուցած չարութիւննին յայտ- առնեմք մի առ մի յականէ յանուանէ: Չատիկ կիրակի եւ երկուշաբթի անվնաս անցուցինք. երեքշաբթի, եւ յետ պատառոյ ապա եմուտ սա- տանայ որպէս զի ստորագրութիւն առաւ ըսելով կատաղեցան. իր սպասաւորաց, մէկը մեր վերայ խրկելով առանց պատճառի դասք դասք հայհոյու- թիւն մեզ եւ ժողովրդական անգամոց եւ ժողովրդոց, այնպիսի մեծ վրդովմունք մի ծագեց որ քիչ մնաց արիւնհեղութիւն պիտի ըլլար: Յայնժամ ժող- վուրդը խուռն բաղնութեամբ հասին մեր վերայ. մինչեւ ե՞րբ այս չարչարանքը պիտի քաշենք. այս երկիրը մեզի պէտքը չէ եւ այս գազաններուն ձեռ- քէն մեզի ազատութիւն չի կայ. թո՛ղ տուր մեզի երթանք Լատինացոյ եւ Բրոթիսթանթաց մօտ. եւ գոնաւէ պէկն ի հարկէ մեզ կազատէ. . . ինչ եւ իցէ, ժողովուրդը յորդորելով համոզեցինք. բայց երբոր երեկոյ եղև, ժամը մէկին սպասաւորը դարձեալ գիւղն ինչպով զարոյցի հոգաբարձու Խօլըրիկ Օհանին տունը հարացան պարպեց, որ երկուդէն այժմ ընտանիք բոլորովին ի յանկողին կըծառայեն. երկրորդ՝ Երմոյեան սակերիչ Յարու- թիւնի չուկան բանալով, ինչ որ արձաթեղէն կար՝ գողցան. նաեւ Տուչիբեան Միքայելի գիւղեր ժա- մանակ բռնութեամբ տունը բացին, ինչ որ ար- ծաթեղէն, սակեղէն կայ՝ կտռեն կտռեն, եւ ժողովական անգամոց ատենապետ Խիլաֆեան Մարգարի սլարտէզը կերթան՝ որքան որ կանա- չեղէն եւ պողատու ծառ կայ՝ բոլորը ջարդու- բուրդ ըրած են. . . եւ այլն: Սրբազան Հայր եւ Ազգասէր Տեարք՝ կամ ծառանուդ հրաման տուէք տեղւոյս հրաժարիլ կամ ժողովուրդը անկից ազատել ուրիշ երկիր մը երթալ. մահս կուզեմ եւ կըմտաւորիմ. բայց չեմ՝ կրնար գտնալ վասն զի այս անօրէններուն ըրածը սիրտս չի գլխանալով՝ հանգրձ ժողովրդովք յետին յուսահատութեան մէջ մնացած ենք: Այս քանի մը օր է որ, դար- ձեալ մեզ ալ թշնամութիւն կընեն, գիւղերները

կուգան մեր բնակարաններուն մօտ կը չըլին որ- պէս զի հրացանով զարնեն. վերջապէս խօսքս ետ չիսիտի առնեմ եւ Ազգիս համար զո՛հ պիտի ըլլամ եւ Ազգը պիտի ազատեմ Աստուծոյ եւ ձեր օժանդակութեամբ:

Սկսեալ ի Փերի գիւղաքաղաքէ Փերիոյ Հաճի Աստուլ աղայի ըրած չարութիւնը եւ չընու- թիւնը նաեւ մարդասպանութիւնը եւ բռնութեամբ ստակ եւ տատանորդ ու պակղրամ հաւարելը մի առ մի ծանուցանեմք:

Ազդ և Զեկուցումն

Փերեցի Խըշտոյեան Պաղտատարը մեռուց եւ 30,000ի չափ ստակը յախշտակեց. առ այժմ հանգուցելոյն ընտանիքը առուր պարկնի կարօտ՝ յետին խեղճութեան մէջ են: Պուլուկեան Պօղոսը անիրաւարար չարաչար սպաննեց: Կոշիւր Փա- միարիկը իր իջեանը տանելով չարաչար հարուած- ներով սպաննեց: Ուրֆալեան Հաճի Պետրոսը աղղապէր հոգի մի էր, ազգային գործերու ջանք ընելուն համար մահադեղով մեռուց. մեռուցած մարդոց երեւելիները ասոնք են. իսկ զաղտնի եղածներուն, որոց թիւը անյայտ է:

300 օխայ հինայ այսինքն գնայ, բռնութեամբ տեղւոյս ժողովրդոց բաժնեց օխան 20 դուրուշ. տեղս կը ծախուի 10 դուրուշ. բռնութեամբ ստակը հաւարեց. 500 կանգուն մեռաւս այսինքն ճան- ֆիս, ան ալ բթտած, ժողովրդոց եւ կանանց բաժանեց կանգունը 20 դուրուշ, տեղս կը ծախ- ուի 10 կամ 12 դուրուշ. 300 հատ այլազգի գլուխ կապելիք այսինքն ահմետիէ ձերմակ, բռնութեամբ տուաւ որպէս զի վիճակը Տաճկաստան ընէ, զին 100 դուրուշ, որ տեղս կը ծախուի 20 կամ հազիւ 30 դուրուշ կընէ. 100 լիտր բամբակ կանանց պիտի բաժնէ. երբէք չի պակսեցնելով պիտի մանեն եւ կտաւ գործեն, բայց ինչպէս կըլլայ թող ըլլայ, մանկի եւ գործվի. անպատճառ կը կապակի, առանց վարձի եւ պակասը չընդունիր, բայց երբոր կտաւ գործը վեցաւ՝ կը հաւարէ, այնու յետոյ արհեստաւորները կամ վաճառական- ները յատուկ յատուկ կանչելով՝ մէկ մէկ թօփ կտաւ կուտայ եւ անոր փոխարէնը մէկ լիտր իւղ կառնէ. թօփ մի կտաւ տեղս կընէ 18 կամ 20 դուրուշ՝ մէկ լիտր իւղ կընէ 50 կամ 60 դուրուշ: Թողութը չուկաներուն, սալրոնայ եւ ընչից տասանորդը բռնն զօրութեամբ յախշտակելը, որ անհնարին է մի տու մի ծանուցանել. բոլոր տարի մը գրենք՝ վերջանալիքը չի կայ:

Արքունուստ ծախուած ինթիլամ եայլն, որ եւ իցէ անձ մը ինթիլամ՝ առնողը, որ միւրյնն կառնէ, առած գնայն կրկնապատիկը Աղան պիտի առնէ, որ նոյն անձը երկու արձակ համարձակ իր վաստա- կին եւ գործին հետեւի: 1,200 դուրուշ խառաղ էմաֆիկն գուր տեղը կառնէ, որ նոյն մսագործը իր արհեստը գործածէ. իսկ եթէ ընդգլխմանայ՝ մէկ գիւղերուան մէջ անիկայ գոհ կընէ. 1,200 դուրուշ չէօմէկի՛ն էմաֆիկն պիտի առնէ տարապարտուց. իսկ եթէ չտալու ըլլայ՝ չուկան կը գոցէ կամ կը մեռնէ. 1,200 դուրուշ քէլէկի՛ն էմաֆիկն. այս քէլէկի՛ն ըսուածը այն է որ Չար Սանճախ մեծամեծ գետերչատ կացու Եւրատ գետը. բայց նոյն գետնն երբէր մարդ չիկրնար անցնիլ եւ կամուրջ ալ չիկայ, վասն այնպիսի տիկերը փութով լեցուած, 2 իրար կապուած. եւ անոր վրան ալ տախտակ դրածնն որպէս զի այն ճանապարհորդները հանգիտտ ար-

Ճակ համարձակ երթման գնան : 1,000 կամ 2,000 զուրուշ քիչ պակաս երբոր հարանիք ընեն , այս- րան պատկի փարայ պիտի վճարէ աղային և ընդ նմին խոյ մի և կամ ուրիշ ընծայ , բայց երբոր 1,000 կամ 2,000 զուրուշը առաւ՝ կարգը կուգայ իմամին , ա՛ն ալ 100 կամ 150 զուրուշ ըստ ար- ժանւոյն կանխիկ դրամը պիտի առնէ : որ հրամա- նագրիւր սոյս . նոյնպէս սպասաւորը . . . բայց երբ որ իջեալն կանանց վերաբերեալ գործ մի պատահի՝ 50 կամ 100 կնիկ մարդ կը ժողվէ , կաշխատոյնէ առանց վարձի և առանց հայի՝ ինքը և զազան սպասաւորները անոնց վերայ վերա- կայու և այլն . և մինչև իրիկուն երբէք դուրս չի հաներ , որպէս բանտարկեալ . երբոր գործերնին կատարի՝ թոյլ տան . այսու տմենայնիւ առանձին առանձին կանայք իր տունը տանելով՝ կանանց բերանէ 1,000 կամ 5,000 զուրուշի պարտա- մուրճակ կառնէ անիրաւարար . երբոր զիտաւորը Պօլսէն կամ ի պանդխտութենէ գայ՝ կնիկդ այս- քան ստակ մեզի տալու է ըսելով բռնութեամբ կռնէ . և նա կամայ ակամայ՝ փառն աճին պիտի վճարէ օր յառաջ վասնդ յամենայն ժամ նկուն եւն անօրէնին առջև :

Պիտի շարունակուի

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Դանմարգի արքան առաջարկեց իր Պաշտօ- նէյց հրաժարականին տալ եւ Կոմս Բաու Մօլ- տըկն նախագահ կարգելով՝ անոր յանձնեց նոր պաշտօնի ընտրութիւնն :

Դանմարգի Գերմանական Դաշնակցութեան մէջ մտնելու առաջադրութեանն , կկարծեն թէ , Յրանապի տէրութիւնն կնեւհակէ , ինչպէս որ , անոր Սկանդինավիայ հետ միանալն Ռուսաց կա- ռավարութեանն հակառակ կերեւի : Այս երկրիս լրագիրներն , մանաւանդ Դադրադ խաղաղութիւն կը արդեն կատարութեանն . իսկ Գերմանական թերթերն , մտանաւորապէս Բեռլինի Վօլի Զի- տունգն անձկութեամբ կնային պատերազմի վախ- ճանին վերայ , որոյ համար արդէն բանագնացու- թիւն կընէ : Դանմարգի արքայի կրտսեր եղբայրն : — Եվելի տէրութիւնն քանի մի պատերազ- մական նաւեր խրկեց որ Գօթենբուրգի եւ Յալ- տերբուրգի մէջ զիտեն :

— Յրանապի կայսրն , իբրեւ իրաւարար , իր վճիռն տուաւ Սիւլէզի Զրանցի խնդրոյ մասին :

— Յունիսի 12ին Մարսիլիէն կայսրն ամենա- մեծ չրեղութեամբ Մերսիի մտեր է եւ ժողովուր- դէն խիստ ջերմ ընդունելութիւն գտեր :

— Օսմանեան Պետութիւնն իր երկրական զօրացմէ 40,000 հոգի տուներնին դարձուցել : Պատերազմի հանդերձանն մեղմանալ սկսան . և ամեն բան կըցնէ որ Գ. խաղաղասիրական քա- ղարականութեան շաւղին կհետեւի :

— Հիւսիսային Ամերիկայի Գանձուց պաշա- տեայ Պարոն Դազի հրաժարուան համբաւն տարա- ծուեցաւ սյուր :

Երբեկէք Ազգացնոյ . — Աղայ Յակոբ Վարպե- տեան խզմիւրէն զարով Մանչեստեր հասաւ , ուր քանի մի օր կենալէն զինի Լոնդոն վերադարձաւ :

ՍՐԵՐՏՐԵՒՆ

ԴԲԱՄ ԿՏԱՆԵՂԷՆ և ԲԱՄԲԱԿ Լոնդոն , Մանչեստեր և Լիւքսմբուրգ . 9 Յունիս :

Այս շաբթուան բանքի հաշիւն կցցունէ որ մետաղեայ գումարը 267,040 Լ . Ս . և պահեստի գումարը 954,890 Լ . Ս . նուազեր են . բայց այս փոփոխութիւնները հասարակայ պարտուց չափն մտա- կայ հատուցմանը դէմ եղած փոխաւորութեանց հետեւութիւնը ըլլալով , ապա օրէն հաւասարակշիւ լինելուն քիչ տարակոյս կը զգացուի :

Շաբթուա մէջ կառուրի գործողութիւնները դիւրութեամբ կկա- տարուին և ընտրութիւն թուղթերն բանքի գինն 30/0 վար կկտրուին :

Վերջին օրերուն Փարլամենտի վէճէն գրեթէ յայտնի ըլլալով որ Նախարարաց կողմը յաղթող պիտի հանդիսանայ և Դանմարգի արքայի պղտիկ եղբոր Բերլին ըբաժ ճանապարհորդութենէն խաղա- դական լուրեր երեսան ելլելով , Սթօք Էքշչենձի բոլոր արժողու- թիւններն զօրացան . և այս բարձրանալուն մէջ նշանաւոր եղան Կօնֆէդէրէթ բաժնակի փոխառնութիւնը , որ Գրանտի անջնորդու- թեան լուրերուն վրայ , 63էն մինչև 68½ ելաւ . և Տաճկաստանի Կօնսոլիդէն , որ այն երկրին վերաբերեալ դրամական նոր հաստա- տութեան մը յաջող ընդունելութիւնէն զօրութիւն առնելով՝ 48½-էն մինչև 50½ բարձրացաւ : Վերջին գիներն հետագորով այսպիս եւն . Անգլիա 30/0 90½ , Տրանսա 30/0 66.10 : Տաճկաստան 60/0 (1858) 70½ : Կօնսոլիդէ 50 . Եղիպտոս 70/0 101½ : Հնդկաստան 50/0 83½ . Կօնֆէդէրէթ բաժ . փոխ 70/0 69 : Միացեալ Նահանգք 52 : Իմպերիալ Օթթոման բանք 18½ : Օրիանտալ Կօնսոլիդէ բանք 10½ : Ամսոյս 4ին Օսմանեան Կայսերական բանքի միջնորդու- թեամբ Բնդհանուր Բնկերութիւն Օսմանեան Կայսերութեան (Société Générale de l'Empire Ottoman) Նորա- հաստատ Բնկերութեան յայտարարութիւնն երեսան ելաւ : Բնկերու- թեան դրամագումրն է 2,000,000 Լ . Ս . 100,000 բաժնի բաժ- նուած , ամէն մէկ բաժնին 20 իբրանոց . մինչև Նոյեմբեր 1 իր բարանչիւր բաժնի վրայ ուժ լիւր պիտի հատուցուի : Դրա- մագումրն աւելցնելու կարողութիւն ունի ընկերութիւնն : Բնկերութեան գործքն պիտի ըլլան ամէն տեսակ դրամական եւ վաճառականական գործողութիւններ , արուեստական ընկերու- թեանց արտադրութիւն և ձեռնտութիւն , կառավարութեան և քաղաքաց փոխառնութիւն , Մաքսատանց և ուրիշ տուրքերու , և եկամուտներու վաճառու մէն և այլն : Բնկերութեան հիմնադիրներն են Օսմանեան Կայսերական բանք :

Պէյ Արիսթիտ Պայթացի	Կոստանտնուպօլիս
Պէյ Պօղոս Մըրըլի Օղու	"
Պարոնայք Պէշօշէյմ և Կօլտալիտ	Լոնդոն
" Ա . Բաժնետէ և Բնկերք	Կոստանտնուպօլիս
" Ֆրուհէն և Կօլլէն	Լոնդոն
" Օրենշէյմ , Ալպերթի և Բնկերք	Կոստանտնուպօլիս
" Ա . Ա . Ռալի (Ա . Ռալի Լոնդոն)	"
" Ճ . Սթէֆանովիչ (Սկիւիթի և Բնկերք , Լոնդոն	"
" Սթէն և Պրօթերս	Լոնդոն և Փարիզ
" Ս . Սուլպաչ	Ֆրանսիոյ
" Զաֆիրօբուլ և Զարիֆի	Կոստանտնուպօլիս
" Բերթաքի Կօլրաֆօզ	"

Իսկ տեսչութիւնը հետեւեալ անձերէ բաղկացաւ է .

Պարոնայք Մ . Շ . Ալպերթի	Պարոնայք Մարքի տը Բէզօք
" Պէյ Արիսթիտ Պայթացի	" Սթէֆան Ռալի
" Պէյ Պօղոս Մըրըլի Օղու	" Կ . Սթէյմանովիչ
" Ա . Բաժնետէ	" Օ . Ռալման
" Ի . Կիւլբերթսն	" Ճ . Զաֆիրօբուլ
" Ճ . Օրենշէյմ	" Էմիլիոնի Բ . Կօլ- բաֆօզ

100,000 բաժնին 24,000ն հիմնադրաց տուրու է երկայն ժա- մանակ մը չլախելու՝ պայմանով , 43,000 բաժնի նոյնպէս հիմնա- դրաց և իրենց բարեկամաց սեպականեալ է , 6,500 բաժնի Կոս- տանտնուպօլիս շաքարակութեան բաժնուէլու է , և մնացած 26,500 բաժնին համար ալ Լոնդոնի մէջ տոտրագումրութիւն կհիւսիսուի : Ըլլալիք վաստակն այսպէս պիտի բաշխուի . և ժողովաւորէն Պօլիս պիտի ըլլայ :

Ա . 60/0 տարեկան շահ վճարեալ դրամագումրի վրայ :
Բ . 100/0 դուրս վաճառակին վրայ պահեստի դուժարին պիտի տարուի :
Գ . 60/0 " " " հիմնադրաց պիտի տրուի :
Դ . 40/0 " " " վարչութեան անդամներուն պիտի տրուի :

Ե . և մնացեալն բաժնետիրաց պիտի բաժնուի :

Հիմնադրաց անուանց կարն որութիւնն և ընելիք ստեղծութուն համբաւեալ շահուէտութիւնն՝ բաժնիներուն բարձր արժեւորն տարակոյս չկին ձգեր . ուստի մինչև 3½ իբրա աւելի զինով ծախ- ուեցան . բայց վերջին գինը 2 կամ 2½ իբրա ստեղծութեամբ էին , կերելի թէ աւելի ևս կարճէին թէ որ հիմնադրաց և վարչաց

կրկնակի վաստակ տրուելուն և տարեկան հաշուոյն ժողովաւորէն Պօլիս ըլլալու երկու պայմաններն ըլլային :

— Ուրիշ ընկերութիւն մ'ալ , այսինքն Օսմանեան Գրամական Բնկերութիւն (Ottoman Financial Association) , որ անցեալ Փետրուար ամիս կարգադրուեցաւ , արդէն Պօլիս գործողութեան սկսեւ է այսպէս :

Արիկ Էմիլիոնի Թրիւր	Նախագահ
Պարոնայք , Սթէֆան Մարթօբուրտ	Բնդհանուր վարիչ
" Միքայէլ Թրիւր	Գործակալ

— Անցեալ թերթիս մէջ նշանակուած լիւրագումր բաժնակի բարձրանալուն պատճառները բոլոր այս շաբթուա ալ շարունա- կեցին գիները աւելի զօրացնելով և աւարտեցան շատ տեսակներուն համար լիւրէյին ½ փեննէն մինչև ¾ փ . բարձրագոյն գիներով : Ամերիկայի տեսակներն խիստ կփնտուրին . և համբարն նուազ ըլլալով՝ լիւրէյին ¾ փ . ½ մինչև ¾ փ . բարձրացան : Սի Ալլանդ կարի կուզուի և լիւրէյին 1 փ . ½ մինչև 2 փ . ռուղցաւ , մանաւանդ ընտիր տեսակներն : Բարգիլն մեծ քանակութեամբ ծախուեցաւ . բայց համբարն առատ է . Փերնամ և Մարանհամ անուանեալներն ¾ փ . ½ մինչև ¾ փ . բարձրացան . իսկ Բահիա և Մաթիօ միայն ¾ փ : Եգիպտոսի տեսակներուն վրայ կարևոր գործողութիւններ եղան , միջին և լաւ տեսակներն նորէն ¾ փ . բարձրացան : Իռլիքի բաժնակի կարի կփնտուրի և լաւ տեսակներն ¾ փ . լիւր էյին սողցան և ստորին տեսակներուն ալ աւելի մտադրութիւն կցուց- ուի և գիները աւելի կանոնաւոր են : Յունաստանի բաժնակի համբարն նուազ է . և լաւ տեսակներն ծայրագոյն գիներով կծախ- ուին : Արևելեան Հնդկաստանի տեսակներուն վրայ կարևոր ծախքեր եղան լիւրէյին ¾ փեննի մօտ աւելի գիներով . իսկ Զինաստանի վրայ միայն ¾ փ . առաւելութիւն կայ : Շաբթուա ծախքն է 84,880 բալ , որուն 14,670ն տուրեալի , 24,580ն օտար երկիրներ խրկուելու և մնացեալ 45,630 բալն ներքին սպասման համար են : Համբարն կայ 281,377 բալ անցեալ տարուան այս ժամանակի 317,800 բալ համբարին դէմ :

— Անցեալ շաբթուա Մանչեստրի չուկային ժողովինն բոլոր այս շաբթու տեւեց և օրէօր գինն ըն զօրացան և եւելցան . հետեւաբար աղէկ բաժնակէ շինուած մանածի և ամեն տեսակ կտաւեղնի ծա- խողներն գինն ընին բաւական բարձրացուին : Հնդկաստանէն հետագումր խիստ յաջող լուրեր հասան և 5/4 ու 6/4 Երախ- կներն , որ ժամանակէ մի ի վեր համաժողովաբար լքեալ էին , շատ զօրացան , նոյնպէս ալ լաւ տեսակ Մադագոսկարներն և այս չուկային յարմար մանածներն : Գերմանիային , Ռուսիային , Յունաստանին , Սերիային ասպրանք կուզուին նաև խտայնայն , Հիւսիսային Աֆրիկէն և բոլոր մօտակայ չուկաներն : Անգլիոյ ներքին սպասման համար ալ կարևոր վաճառումներ եղան այնպէս , որ արդի առաւել արտադրութիւնը դիւրաւ կծախուի և չուկանու- մէջ ամեն տեսակ ապրանքներու համբարն խիստ , դժուր է :

Յուլիոյ գնոյ և առեւտրական տեղեկութիւնք հայտնութեալ Պարոնայք Ճօրժ Ֆրէզը Ուրի և Բնկերաց George Fraser, Son, and Co.) յանձնարարական վաճառականք և Մանչեստրի :

Բաժնակի գիներու տարբերութիւնն	
գին 1864 ամի	գին 1863 ամի
9 Յունիսի	Նոյն տուն
փեննի .	փեննի .
Ամերիկայի Սի Ալլանդ	0 / 0 43 / 52
Եգիպտոսի	28 / 32½ 22 / 24
Զինուկայի	23 / 26 18½ / 19½
Սուրբաթի	13 / 25 0 / 0
Մադագաի	0 / 0 0 / 17½
Բանկալայի	13 / 25 13½ / 14½
Զինաց	19 / 19½ 15½ / 16½

ԿՏԱՆԵՂԷՆ ԶԵՌԱԳՈՐԾ ԿԱՄ ՄԱՆԵՃԱՏՈՒՐԱ ՄԱՆԶԵՍՏԵՐ

Անթաի Մադափոլլամ — Grey Madapollams.

Լայնք .	Հարկաճ 4 րն .	ճակրու- թիւն .	Երկարու- թիւն .	Հարկաճ 4 րն .	ճակրու- թիւն .
31	13X8	2 8	24	6 / 7½	6 / 10½
32	14X10	3 0	"	7 / 9½	8 / 1½
"	14X13	3 2	"	8 / 3	8 / 6
"	16X15	3 8	"	9 / 6	9 / 10½

Մադափոլլամ կփնտուրի և թօփին 1½ փ . սուղ է :

Անթաի Բանուի կտա — Grey Printers.

26	14X13	6 8	58	17 / 10	18 / 4
34	16X16	8 8	50	23 / 6	24 / 10
"	17X17	9 4 6	"	25 / 9	27 / 3
36	16X16	9 6	"	25 / 3	26 / 6
"	17X17	10 0	"	27 / 6	29 / 9
"	17X19	10 8	"	30 / 0	31 / 3
"	19X19	11 0	"	34 / 3	35 / 0

Կանդուրի թօփին 4 կամ 6 փ . բարձր գիներով :

Անթախ Կարտոն - Grey T Cloths.

19	12x10	2 0	22	5/0	5/9
"	12x12	2 8	"	6/0	6/9
"	15x14	3 0	"	7/0	7/9
"	15x15	4 0	"	8/7 1/2	9/10 1/2
29	12x10	4 0	24	8/7 1/2	9/8
"	14x12	5 0	"	10/6	11/9
"	15x15	6 0	"	13/3	14/6
32	14x13	6 0	"	12/6	13/9
"	15x15	6 0	"	13/3	14/6
"	15x15	7 0	"	15/6	17/0
"	17x17	7 0	"	17/9	19/0
36	15x15	8 0	"	18/6	19/6
"	17x17	8 0	"	20/3	21/9

Անթախ Ամերիկոն - Grey Long Cloths.

27	17x17	7 0	36	17/6	19/3
32	"	8 0	"	20/0	22/0
36	14x11	6 0	"	14/3	16/0
"	14x12	7 0	"	16/4	18/9
"	14x13	8 0	"	18/0	21/6
39	14x13	9 0	"	19/6	23/6
"	14x13	10 0	"	21/8	25/6
43	14x12	9 0	"	19/6	23/6
"	14x13	10 0	"	21/8	25/6

Անթախ Շերտինգս - Grey Shirts.

39	12x9	5 4	8 1/2	13/3	14/0
"	14x10	6 0	"	15/6	16/6
"	14x12	7 0	"	17/6	18/3
"	14x13	7 0	"	18/0	18/10 1/2
"	16x15	8 4	"	21/0	22/6
"	16x16	8 8	"	22/0	24/0
"	17x17	8 4	"	23/0	24/3
45	14x10	7 0	"	17/10 1/2	19/0
"	14x12	8 0	"	21/0	22/0
"	16x15	9 0	"	23/6	24/6
50	16x15	10 0	"	25/6	29/0
54	16x15	11 0	"	29/3	30/9

Անթախ Բեյզեթ - Grey Jacquets.

30	10x8	2 1	20	5/10 1/2	6/0 1/2
"	12x12	2 2	"	6/3	7 1/2
"	14x14	2 8	"	7/3	7 7/2
44	12x12	2 6	"	7/4 1/2	7/10 1/2
"	14x14	2 12	"	8/1 1/2	8/7 1/2

Անթախ Մուլ - Grey Mulls.

39	10x8	1 5	0	4/6	4/9
"	10x9	1 7	"	4/9	5/0
"	12x11	1 12	"	5/9	6/0
"	14x12	1 10	"	6/1 1/2	6/4 1/2
"	14x13	1 9	"	6/3	6/6
"	16x14	1 9	"	6/4 1/2	6/7 1/2
44	16x15	2 1	"	7/1 1/2	7/6

Ճերմակ Սալավոր - White Tanjibs.

29	1 12	12x9	20	5/2 1/2	5/4 1/2
"	2 0	14x10	"	6/1	6/3
33 1/2	2 0	12x10	"	6/1	6/3
34 1/2	2 8	14x10	"	7/0 1/2	7/3
38/9	2 8	12x10	"	7/1 1/2	7/3
"	3 0	14x10	"	8/3	8/6
43	3 8	14x10	"	9/3	9/6
46/7	3 12	14x10	"	10/7 1/2	10/9

ՄԱՆԱԾԻ

Վոտը Տախտ - Water Twist.

No.	4/14 միջ. թիվ	12	1/4 1/2	1/7 1/10	2/5 1/2	6 2/9
"	16/24	"	20	2/2 1/2	2/4 1/2	2/8 3/0
"	26/32	"	30	2/5 1/2	2/9 1/2	2/10 3/1
"	38/42	"	40	3/1	3/2 3/3	3/4 3/5

Վոտը տախտ տողին տեսակի միջև. N. 12 թիվերին գատ, ընդհանրապես ասեն տեսակներն լիարժեք 1 փ. բարձրացած են:

Միւլ Տախտ - Mule Twist.

No.	4/14 միջ. թիվ	12	1/2	1/7 1/2	2/4 1/2	2/6 2/8
"	16/24	"	20	1/11	2/12	2/7 2/8
"	26/32	"	30	2/2	2/4 2/5	2/8 2/9
"	38/42	"	40	2/5	2/6 2/7	2/9 2/11

Միւլ տախտի ալ նոյնպէս 1 փ. լիարժեք բարձրացած է:

Էքտրա Մանած - Extra Hard.

No.	4/14 միջ. թիվ	12	1/9	2/12	2/7 2/8	2/11
"	6/24	"	20	—	2/7	2/10 2/10
"	26/32	"	30	—	2/11	3/0 3/2

Գիններն լիարժեք 1 փ. բարձր կնշանակեմք բոլոր կարի շինարարութիւն:

Կրկնաթել Մանած Հիւսեր և Կարեր.

No.	4/14 միջ. թիվ	12	1/9 1/2	2/11 1/2	2/5 1/2	2/7 3/11
"	6/24	"	20	2/3 1/2	2/4 2/6	2/10 3/3 1/2
"	26/32	"	30	2/7 1/2	2/9 1/2	2/11 3/7 1/2
"	38/42	"	40	2/10 1/2	3/0 1/2	3/4 3/10 1/2

Լիարժեք 1 փ. բարձր են և կարի կրկնաթել:

ԲՈՒՐԳ : Լիւրսիւ և Լանդոն 9 Յուլիս :

Բուրգի և բորոգ ածուրդն անկի պիտի ամսոյ 2ին. այժմեան գիններն յայտնի չեն. միայն թէ Անգլիոյ Էսթիմալմոնթի թիւներէն 181,757 բալ բուրգ և կաւ, այսինքն 48,229 փորտ Ֆիլիպպին, 27,667 Սիդնեյէն 12,868 Վան Գամբիէն 1,անդէն, 9,583 Անդալուզիէն, 22,890 Նոր Զելանդիէն, 10,633 Բարի Յուսոյ Հրուանդանէն և այլն:

Եղիպտոսի ճերմակ լան	0/8 1/2	1/5
Ալբանիայի, Վիտիէի և Ստրիպի լան	0/5	1/2 1/2
Ինկուրիի ճերմակ ֆիլի	0/0	0/0
Իգմիլի լուսացուած Ա. տեսակն	0/0	0/0
Սիդնեյի լան	2/2	2/10
Պարսից ճերմակ Ա.	0/0	0/0
Ռուսիոյ լուս. մերկուս	0/0	0/0
Սպանիոյ Լիւնդա	1/6	2/5
Բրուկի լուսացուածն	0/0	0/0
Նոր Զելանդի	0/10	2/1
Հարաւային Ամերիկայի	0/4 1/2	1/6 1/2

ՄԵՏԱՔՍ : Լանդոն 9 Յուլիս :

Մետաքսի լըլըր բաղանի, ամիսն մի անդամ էլլելով, Եղիպտոսի գունդն ալ այսուհետեւ, մետաքսի տեսակի վերայ ամիսն մի անգամ պիտի խորհրդածէ, և անոր գիններն փոփոխել: Դարձեալ մէջ ծախսուեցան 13,094 լիպրէ հում մետաքս, որոցմէ 10,434 Ռոտտերդամ. 212 Բուլոն. 2,046 Համբուրգ. 402 Բելգիա և այլն:

Բանկալայի Ա. տեսակն Սուրբաշի	19/6	22/0
= Ռադնալորի	12/0	20/6
Չինաստանի Յաւայէ	13/0	26/0
= Տայասի	18/0	21/6
Յափոնի Մէքալի լուս. տեսակն	13/0	26/0
= Մալուաշի	0/0	0/0
Պարսկաստանի	13/0	17/0
Պինմոնի	30/6	33/0
Թուրքաստանի. Բուրսայի ֆարքիւր	27/0	31/0
Իտալիոյ. Միլանի Բիւրգալի	22/0	25/0

ԿՈՆՏԵՆՆԵՐ ԵՎ ՊՐԱՆԿ :

Սուրբ Լաւրէ Էլեպրէն 3 փէն. Յուլիսի Բուրգալի 1 փէն. Թուրքալի Էլեպրէն 7 փէն. Ռուսի Էլեպրէն 10 փէն. 2 փէն. Թուրքալի Էլեպրէն 12 փէն. 8 փէն. Էլեպրէն 13 փէն. 10 փէն. Էլեպրէն 16 փէն. Էլեպրէն 18 փէն. 4 փէն. Էլեպրէն 1 փէն:

ՀԱՔԱՐ : Բանկալայի Կարիւր	43/0	51/0
= Բենարսի ճերմակն	43/6	45/0
= Դասի	30/0	43/0
= Մալուաշի ճերմակն	47/0	51/6
= Չինի և Սիւմի ճերմակ և դեղին	43/0	47/0
= " Թուրք տեսակն	33/0	40/0
= Բուրգալի ճերմակն	41/0	46/0
= " 10 լիպրանոց գունդ	42/6	0/0
= Հալանայի ճերմակն	47/6	40/0
= Արեւմտեան Հնդկաց միջակ	40/0	41/0
= Գուաթեմալայի	36/0	42/6
= Մանիլայի	0/0	0/6
= Յալայի	42/0	47/0
ՍՈՒՐՃ (բաշկէ) Մէքալի կամ Էմանի	94/0	102/0
= Յալայի և Բուրսայի	76/0	86/0
= Պորտո Ռիկի	67/0	84/0
= Սին Գոմիոյի	62/0	72/0

ԲՈՒՆՉ Բանկալայի	9/6	13/9
= Մալուաշի	8/6	10/6
= Փառնայի	12/6	21/0
= Կարոլիի	30/0	40/0
ՅՈՐԵՆ Օղեսայի	41/0	45/0
= Միւլ և ալ Նաշանագ	41/0	44/0
ԳԱՐԻ ՄՍՐԱՅՈՐԵՆ	25/0	29/0
ԿՏԱՎԱՏ Եղիպտոսի	29/0	30/0
= Ռիպալի	2/0	53/0
ԿՈՃ (զէնէֆիլ) Յամպլիի լան	140/0	180/0
= Ափրիկի	0/	51/0
ՌՕՄ Յամպլիի լուս. գալուն	3/8	4/8
= Կղզեաց և Հնդկաստանի	1/4 1/2	1/5
ՊՂՊՆՂ (բիւլ) Մալուաշի սեն լիպրէն	4	4 1/2
= Սինգափորի սեն	3 1/2	3 3/4
= ճերմակ տեսակն	6	1/1
ԹԵՅ Կոնգո	7 1/2	2/2
= Սուլոնգ	1/0	2/8
ՏԱՔՐԵՂ (բաշար)	2/0 1/2	2/3
ԱՅԻՍԵՆ Թուրքաստանի	18/6	19/0
ԽԵԺ (զամբ) Արաբիոյ լան	70/0	85/0
= Բարբադոս	60/0	68/0
ԳԼՏՈՐ (մազը) Թուրք. կապրոս	170/0	185/0
= ճերմակ և ալ տեսակ	140/0	150/0
ՃԵՀՐԻ Պարսկաստանի	75/0	85/0
= Իգմիլի	30/0	42/0
ԿԱՂԻՆ ՎԱՅՐԻ (փալամուտ) Բեռն	14/0	17/0
ՏՈՐՈՆ (բուրգ քիլա) Իգմիլի. լան	48/0	52/0
= Արաբիոյ, Ասորիի և Կիպրոսի	0/0	0/0
= Բուրսայի	24/0	25/0
ԿԱՆԵՓ Ռիպալի	37 10/0	0/0
= Մանիլայի	34 0/0	36 0/0
= Բուրսայի	18 0/0	29 0/0
ՈՐՈՍՆ ԿԱՐՄԻՐ (բում) ճերմակ. լիպրէն	3/1	3/6
= սեն	3/8	4/8
ԼԵՂԱԿ (չիվիտ) Բանկալայի լան	8/0	8/4
= միջակ և ստորին	6/0	7/3
= Ռիպալի	2/0	6/6
= Մալուաշի ամեն տեսակն	1/0	5/9
= Քիւրբանի	1/9	6/6
ՇԻՔ ԳՐԵՆ Լանթ. լիւր. 6	0/0	6 5/0
ՆՇԱՐԻՐ 6	0/0	6 2/4
ԲԵՐԵՄ ԹԱՐԹԱՐ Յրանայի	112/6	115/0
= դեղին	95/0	105/0
= թուրք	85/0	92/6
ՄԱԳՆԵՉԻԱ	42/6	45/0
ՎԱՐԻՔԻՆ (զիւլ և ալ) Ես. ցան	16/0	24/0
ՄԵՂԱՍՄԱՅ Հնդկաստան. թան. լիւր. 10	0/0	12 0/0
= Ամերիկայի	8 15/0	9 0/0
ՃԱՐՊ Պենտարուրի Ն. Ե. Լանթ.	40/9 00	0/0
= Սեւ ծովէն և կածն	41/6 0/0	0/0
= Հարաւային Ամերիկայի	00 41/6 00	42/0
ԹՈՒՉ (ինճիլ)	35/0 00	55/0
ՉԱՄԻՉ Վալանի	00 27/00	29/0
= Իգմիլի կարմիրն	00 25/00	30/0
= Սուլան Ա.	00 36/00	41/0
ՉԵԺ Կէլալուրի 252 գալուն (թան).	61 0/0	62 0/0
Արեւ. լիւր. և Մալուաշի	55 0/0	56 10/0
Թրիւտի	58 0/0	0/0 0/0
ՄԵՏԱՂՔ. պղինձ. ցանի տակ	105 0/0	109/0 0/0
= Թերթ (չիւ)	90 0/0	103/0 0/0
ՉԻՆԳ	00 0/0	0/0 0/0
ԵՐԿԱԹ ճող	7 7 1/2/0	8 5/0
= գամբու	9 10/0	10 0/0
= Թերթ	11 10/0	12 0/0
ԿԱՊԱՐ (բուրգուն) Թերթ.	20 0/0	20 15/0
ԱՆԱԳ (բալայ)	106 0/0	00 0/0